

ՀՀ Սահմանադրության օրվան նվիրված միջոցառման մասնակիցներին ողջունեց ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղեկալ Մելս Հարությունյանը

Մ/թ հուլիսի 4-ին Վայոց ձորի մարզային երիտասարդական կենտրոնում տեղի ունեցավ ինտելեկտուալ խաղերի մրցույթ-փառատոն (բրեյն-ոինգ) նվիրված ՀՀ սահմանադրության օրվան:

Մասնակիցներին ողջունեց և հաջողություններ մաղթեց ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղեկալ Մելս Հարությունյանը:

Մրցույթին մասնակցում էին փնջային փուլում հաղթած 5 թիմ:

Առաջին տեղը զբաղեց և ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից առաջին կարգի դիպլոմի արժանացավ Վայքի քաղաքային թիմը, երկրորդ կարգի դիպլոմի արժանացավ ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի թիմը, երրորդ կարգի դիպլոմի Եղեգնաձորի „Գիտելիք,, համալսարանի թիմը: Շնորհակալագրերի արժանացան Եղեգնաձորի տարածքային պետական քոլոջի և Եղեգնաձորի ավագ դպրոցի թիմերը: